ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղ

ՏՈՀՄԻԿ ՕՐ

Սերաստիա
Էրզրում Կիլիկիա
Պոլիս
Գոնիա Սրտանա
Ուրֆա Վան
Անկորա Պիթլիս
Տիգրանակերտ
Խարբերդ
Տրապիզոն
Քասթէմոնի

5 Դեկտեմբեր 2015

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԷՐԳԻՐ

Պատմություն եւ արդիական խնդիրներ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հ.Հ. գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի Տնօրեն, Դոքտ. Պրոֆ.

Հայ ժողովուրդն իր հարուստ քաղաքակրթական պատմությունն ու մշակույթը սփեղծել է համայն մարդկության բնօրրաններից մեկը հանդիսացող Հայկական լեռնաշխարհում, որի տարածքը կազմել է շուրջ 400 հազար քառակումի կմ: Պատահական չէ, որ ըստ Սուրբ գրքի՝ Ասփվածաշնչի, դրախտը գտնվել է հայոց Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանում, որտեղ ձեւավորվել ու ապա մինչեւ Եվրոպա, Հնդկաստան ու Ամերիկա են տարածվել հնդեվրոպական (արիական) ժողովուրդները, որոնք համաշխարհային քաղաքակրթության մեջ ունեն առանձնակի տեղ ու դեր:

Քրիստոսից առաջ 7-5-րդ հազարամյակներում իր բնօրրան Հայկական բարձրավանդակում ձեւավորված հայ ժողովուրդը շուտով կյանքի է կոչել առաջին պետական կազմավորումները՝ Արափտա (Արարատա երկիր), Արմանում, Արմե, Ուրմե, Արմե-Շուբրիա, Հայասա, Էթիունի եւ այլ անուններով: Հայոց քաղաքակրթական աննախադեպ առաջընթացի գործում հատկապես կարեւոր դեր է ունեցել Ք. ա. 9-6-րդ դարերում գոյություն ունեցած Վանի Արարատյան թագավորությունը, որն ասորեստանյան աղբյուրներում հայտնի է Ուրարտու անունով:

Ք.ա. 6-րդ դարից, երբ Հայաստանը հայտնվեց աշխարհի գերտերությունների պայքարի կիզակետում, ժամանակավորապես սկսվեց հայկական պետականության թուլացման գործընթաց: Բայց Հայաստանը կարողացավ իր պետականությունը պահպանել ինչպես Աքեմենյան Պարսկաստանի, այնպես էլ Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունների հզորացման պայմաններում: Հունահռոմեական սկզբնաղբյուրների վկայությամբ Ք.ա. 4-րդ դարի վերջին Հայկական լեռնաշխարհում կային չորս հայկական պետություններ՝ Մեծ Հայք (Արմենի Մայոր), Փոքր Հայք (Արմենիա Մինոր), Ծոփք (Սոփենե) եւ Կոմմագենե: Բայց այս մասնատվածությունը երկար չտեւեց եւ վերացավ Ք.ա 2-րդ դարի սկզբին՝ Արտաշես Ա արքայի միավորիչ գործունեության շնորհիվ:

Գտնվելով Արեւելք-Արեւմուտք առեւտրական ու ռազմաքաղաքական ճանապարհների խաչմերուկում՝ հետագայում եւս Հայաստանին վիճակվեց մեծ տերությունների պայքարի թատերաբեմ լինելու: 4-րդ դարի վերջին՝ 387 թ. Հայոց երկրի համար մղվող հերթական պայքարի արդյունքում այն առաջին անգամ բաժանվեց երկու աշխարահակալ տերությունների միջեւ: Արեւմտյան Հայաստանն ընկավ Հռոմի (395 թվականից՝ Բյուզանդիա) եւ Սասանյան Իրանի (Պարսկաստան) փիրապետության տակ: Բյուզանդիան եւ Պարսկաստանը

Հայաստանը երկրորդ անգամ միմյանց միջեւ բաժանեցին ավելի քան երկու դար անց՝ 591 թ.: Այսպիսով՝ վաղ միջնադարից ասպարեզ իջան ոչ այնքան աշխարհագրական, որքան քաղաքական հասկացություններ՝ Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստան: Սակայն այդ դարաշրջանում նմանօրինակ վիճակը երկար չտեւեց: Հայաստանը, օտար նվաճողների դամ համառ պայքարում կրկին վերամիավորվեց, իսկ 885 թ. Բագրատունիների օրոք վերականգնեց իր պետականությունը:

11-րդ դարի երկրորդ կեսից, երբ տարածաշրջանում հայտնվեցին սելջուկ թուրքերը, ինչպես հայության, այնպես էլ այլ ժողովուրդների համար սկսվեց դժվարին ու երկարատեւ պայքարի մի ժամանակաշրջան: 13-րդ դարում ասպարել իջան մոնղոլական, 14-15-րդ դարերում՝ թուրքմենական ցեղերը: Բայց ամենածանր ժամանակները դեռ առջեւում էին: 16-րդ դարի սկզբից Հայաստանը դարձավ Օսմանյան կայսրության եւ Սեֆյան Իրանի արյունալի պայքարի թատերաբեմ: Հայ ժողովրդի համար սկսվեց երկարատեւ ու մղձավանջային մի ժամանակաշրջան:

Պարսկաթուրքական պատերազմների առաջին փուլն ավարտվեց 1555 թ. Ամասիայում կնքված հաշտությամբ, ըստ որի՝ Արեւմտյան Հայաստանն ընկավ օսմանյան Թուրքիայի, իսկ Արեւելյան Հայաստանը՝ Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Երկրորդ անգամ նույն տերությունները Հայաստանը բաժանեցին 1639 թ.: Թուրք-պարսկական սահմանն անցնում էր Մեծ եւ Փոքր Մասիսների միջով, Հայկական պար լեռնաշղթայով, Վասպուրական-Կոտուրի լեռներով, հասնում մինչեւ Հյուսիսային Իրաք: Այդ ժամանակներից հաստատապես շրջանառություն մտավ երկու Հայաստանների իրողությունը, որը շատ ծանր հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի ու նրա հայրենիքի համար: Գրականության մեջ գործածություն գտան նաեւ համապատասխանաբար՝ Թուրքահայաստան եւ Պարսկահայաստան, գիտաքաղաքական առումով՝ կեղծ ու արհեստածին եզրաբառերը: Երբ 19-րդ դարի առաջին երեսնամյակին Արեւելյան Հայաստանի զգալի մասն Իրանից անցավ Ռուսական կայսրությանը, այդ տարածքի հասցեին կիրառություն գտավ զուգահեռաբար եւս մեկ շինծու բառ՝ Ռուսահայաստան արտահայտությունը:

Օսմանյան թուրքերի կողմից նվաճված տարածքները, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանը, որ ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի ավելի ընդարձակ հատվածը, 16-րդ դարի սկզբին բաժանվեց վարչատարածքային խոշոր միավորների՝ էյալեթների (նահանգ), որոնք էլ իրենց հերթին տրոհվեցին լիվաների կամ սանջակների (գավառներ): Վերջիններս էլ բաժանվեցին կազաների (գավառակ) եւ նահիեների (գյուղախումբ): Մինչեւ 17-րդ դարի կեսերը Արեւմտյան Հայաստանում կազմավորվեցին Կարնո (Էրզրումի), Կարսի, Ախալցխայի կամ Չլդրի, Վանի, Դիարբեքիրի (Տիգրանակերտ) եւ Սեբաստիայի (Սվազ) նահանգները: Նահանգապետերի մեջ առանձնահատուկ կարգավիճակ ուներ Էրզրումի վալին՝ նահանգապետը, որին վերապահված էր նաեւ կայսրության արեւելյան նահանգների զորքերի հրամանատարի պաշտոնը, որի համար նա հայտնի էր նաեւ զինվորական՝ սերասկյար փիփղոսով:

Ի սկզբանե օսմանցիների վարչատարածքային քաղաքականությունը պայմանավորվեց մահմեդական վերնախավի շահերով եւ աչքի ընկավ հարատեւ փոփոխություններով: Այդուհանդերձ, այդ բաժանումների հիմքում ընկավ երբեմնի հայկական թագավորությունների ավանդական բաժանումը: Այսպես՝ Կարնո նահանգը հիմնականում ձեւավորվեց պատմական Բարձր Հայքի, Վանը՝ Վաս-

պուրականի, Ախալցխան՝ Գուգարքի ու Տայքի փարածքների վրա եւ այլն: Հիմնականում նույն կերպ պահպանվեց նաեւ գավառական բաժանումը:

Արեւմտյան Հայաստանի փարածքների բռնազավթումից հետո օսմանյան իշխանություններն սկսեցին դրանք բնակեցնել թյուրքական ու քրդական ցեղերով՝ ամեն կերպ իրենց բնօրրաններից դուրս մղելով հայությանը: Այդ քաղաքականությունն ավելի ակնառու դարձավ 16-րդ դարի սկզբից, երբ սկսված պարսկա-թուրքական պատերազմներում սուլթանական կառավարությանը պարզ դարձավ, որ ի դեմս Սեֆյան Իրանի Օսմանյան կայսրությունը գործ ունի նոր ու հզոր փերության, որի դեմ պայքարի համար անհրաժեշտ են դաշնակիցներ, նյութական ահռելի միջոցներ: Սուլթան Սելիմ Ահեղը 1515 թվականից Հյուսիսային Իրաքում քոչվորական կենցաղով ապրող քրդական ցեղերին, շնորհելով բազմաթիվ արտոնություններ, շահագրգռեց փեղափոխվելու Արեւմտյան Հայաստանի պարսկամերձ սահմաններ: Նպատակը՝ սուննի քրդերին շիա պարսիկների դեմ պատերազմում օգտագործելն էր:

Սկզբնական շրջանում քրդերը նկատելի աջակցություն բերեցին օսմանյան զորքերին: Բայց ժամանակի ընթացքում նրանց թիվն Արեւմտյան Հայաստանում այնքան աճեց, որ կենտրոնական իշխանությունները կորցրեցին վերահսկողությունի ինչպես քրդական ցեղերի, այնպես էլ երկրամասի նկատմամբ: Քրդերը սփեղծեցին կիսանկախ իշխանություններ՝ դերեբեյություններ (հովփապեփություն) եւ իրենց ցեղային աշիրեթներով դարձան Արեւմտյան Հայաստանի ռազմավարչական իրական իշխանությունը: Արդեն 19-րդ դարի սկզբին քրդական ցեղապեփությունները Բայազեփի, Խլաթի, Արճեշի, Արծկեի, Մանազկերփի, Բաղեշի, Շապին Կարահիսարի եւ այլ շրջաններում փաստորեն փոխարինել էին օսմանյան էյալեթների վալի-նահանգապեփերին: Դրանց կառավարիչները հաշվի չէին նսփում ոչ միայն փեղի կառավարիչների, այլ նաեւ կենտրոնական իշխանությունների հետ եւ որպես կանոն, վերջիններից սփանում էին փաշայական փիփղոսներ (երկդուղյան, եռդուղյան փաշա եւ այլն): Ի դեպ, ինչպես Արեւմտյան Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, օգփվելով օսմանյան կենտրոնական իշխանությունների թուլացումից, հայությունը եւս կարողանում էր նույնպես պահպանել իր կիսանկախ, նաեւ՝ ինքնիշխան կարգավիճակը՝ բավարարվելով միայն փերությանը որոշակի քանակությամբ հարկ վճարելով: Այդպիսի կարգավիճակ ունեին Սասունը, Զեյթունը, Մոկսը, Շափախը եւ այլն:

Հայկական լեռնաշխարհին օփար էթնիկ փարրերով բնակեցնելուն զուգընթաց սուլթանական իշխանություններն իրականացնում էին հայկական փեղանվանաբանությունը փոփոխելու, աղճափելու քաղաքականություն: Հայկական անունները կամ ուղղակի թարգմանվում էին կամ դրանց փրվում թյուրքական անվանումներ: Այդ քաղաքականության հեփեւանքով Կարինը դարձավ Էրզրում (հայկական փարբերակն Արզրումն է), Բաղեշը՝ Բիթլիս, Խարբերդը՝ Էլյազիգ, Սպերը՝ Խափիր, Բաբերդը՝ Բայբուրդ: Հայկական նշանավոր վանքերն իրենց ունեցած եկեղեցիների թվաքանակին կամ կառուցված քարի գույնին համապափասխան թուրքերին «ներկայացան» հետեւյալ կերպ. Բագրեւանդի Ս. Հովհաննու վանքը՝ որպես Ուչ քիլիսե (երեք եկեղեցի), Խծկոնքը՝ Բեշքիլիսե (հինգ եկեղեցի), Վարագավանքը՝ Եդի քիլիսե (յոթ եկեղեցի), Մուշի Ս. Հովհաննեսը՝ Կըզըլ կամ Կըրմըզի (կարմիր) քիլիսե եւ այլն:

Հայաստանի քաղաքական մասնափվածությունն իր հետ որոշակիորեն բերեց նաեւ հայերենի երկու ճյուղերի ձեւավորմանը: 16-18-րդ դարերից ժողովրդական ավելի լայն շրջաններում միջին հայերենն աստիճանաբար սկսեց իր փեղը զիջել աշխարհաբարին: Արեւմփահայաստանում Կարնո բարբառի եւ պոլսահայերենի հիմքի վրա ձեւավորվեց արեւմփահայերենը, Արարափյան ու Լոռու բարբառների հիման վրա՝ արեւելահայերենը: Այս հանգամանքը փաստորեն ավելի դժվարացրեց հայ ժողովրդի երկու հափվածների հոգեւոր-մշակութային շփման հնարավորությունը:

Ամբողջ 19-րդ դարի ընթացքում Ռուսական կայսրությունը համառ պայքար ծավալեց Անդրկովկասին ու Արեւմտյան Հայաստանին փիրելու ուղղությամբ: Այդ ընթացքում փեղի ունեցան բազմաթիվ պափերազմներ: Ընդ որում դրանք ընթանում էին ոչ միայն Հայաստանի փարածքում, այլ նաեւ Արեւմտյան՝ մասնավորապես Բալկանյան ճակափում, քանի որ Ռուսաստանը նպափակ էր դրել՝ փեր դառնալու սեւծովյան նեղուցներին՝ Բոսֆորին ու Դարդանելին:

19-րդ դարի առաջին երեսնամյակին Ռուսական կայսրությունը Պարսկասփանից գրավեց Արեւելյան Հայաստանի զգալի մասը եւ միաժամանակ պայքար ծավալեց փիրելու Արեւմտյան Հայաստանին: Սակայն Ռուսական արքունիքը թուրքերի հետ բոլոր պափերազմներում նախապափվությունը փվեց Բալկաններում հաստափվելու ռազմավարությանը: Այսինքն՝ ռուսական դիվանագիփությունը գրավված արեւմփահայ գավառները կայսրությանը միացնելու հարցում միշփ չէ, որ հեփեւողական գտնվեց: Ավելին՝ նվաճված Արեւմփահայաստանի փարածքները հաճախ վերածվեցին թուրքերի հետ սակարկության առարկայի եւ որպես կանոն, Բալկաններում հաջողություն արձանագրելուց հետո ռուսական իշխանությունները զիջումների գնեցին հայկական հողերի հարցում՝ շափ դեպքերում դրանք կրկին վերադարձնելով Օսմանյան կայսրությանը:

Այսպես՝ 1806-1812 թթ. ռուս-թուրքական պափերազմի ընթացքում Կովկասյան ճակափում ռուսների գրաված պափմական Ջավախքը՝ Ախալքալաքի բերդն ու գավառը վերադարձվեցին թուրքերին, այն դեպքում, երբ Արեւմտյան ճակափում ռուսները սփացան Բեսարաբիան (ներկայիս Մոլդովայի մի մասը): 1828-1829 թթ. հաջորդ պափերազմում ռուսական զորքերը գրավեցին Արեւմտյան Հայաստանի զգալի մասը՝ Կարսը, Բասենը, Էրզրումը, Օլթին, Մուշը, Խնուսը, Բաբերդը, Քղին եւ այլ փարածքներ: Սակայն 1829 թ. սեպտեմբերի 2-ին Օսմանյան կայսրության հետ կնքած Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրով Ռուսաստանն իր փարածքներն Անդրկովկասում ընդարձակեց միայն ի հաշիվ Հյուսիսարեւմտյան Հայաստանի՝ Ախալցխայի եւ Ախալքալաքի գավառների, իսկ վերոհիշյալ բոլոր շրջանները կրկին հանձնվեցին Թուրքիային: Նույն գործելակերպը որդեգրվեց նաեւ 1853-1856 թթ. Արեւելյան պափերազմում. Ղրիմում Թուրքիայի դաշնակիցներ Անգլիայի ու Ֆրանսիայի գրաված փարածքները հետ սփանալու դիմաց ռուսներն արդեն երկրորդ անգամ թուրքերին վերադարձրեցին Կարսի բերդն ու գավառը:

Միայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պափերազմից հետո Ռուսական կայսրությունը հասավ Կարսի եւ շրջակա Կաղզվանի, Օլթիի ու Արդահանի միացմանը իր փերությանը: Բայց դարձյալ մնացած գրավյալ հողերը՝ Էրզրումը, Բասենի դաշփի զգալի մասը, Ալակերփն ու Բայազեփը քանիերորդ անգամ վերադարձվեցին օսմանցիներին: Ռուսաստանին միացված Կարսն ու շրջակայքը, որոնցից ձեւավորվեց նոր վարչամիավոր՝ Կարսի մարզը, հայփնվելով Ռուսաստանի գերիշխանության ներքո, քաղաքական առումով դարձավ Արեւելյան Հայաստան: Պափահական չէ, որ գիփաքաղաքական գրականության մեջ

այդուհետ «Ռուսահայատսան» դարձած Կարսի մարզի մասին խոսվում է որպես Արեւելյան Հայաստանի փարածքի մասին:

Արեւմտահայ հողերը գրավելու եւ այն կրկին Թուրքիային վերադարձնելու ռուսական քաղաքականությունն արեւմտահայությանը կանգնեցրեց ծանր կացության առջեւ: Բոլոր պատերազմներում հայերը բազմակողմանի օգնություն էին ցուցաբերում ռուսական զորքերին, նրանց ապահովում պարենամթերքով, կամավորական ջոկատներով մասնակցում ռազմական գործողություններին եւ այլն: Բայց փարածքները նորից Օսմանյան կայսրությանը վերադարձնելուց հետո նրանք հայտնվում էին թուրքերի վրեժխնդրության իրական վփանգի առջեւ: Այդ պատճառով հաճախ արեւմտահայերը, այլընտրանք չունենալով, սրիպված թողնում էին իրենց բնօրրանները եւ վերաբնակվում Արեւելյան Հայստանում ու Ռուսաստանին անցած այլ փարածքներում: Բնականաբար, այդօրինակ ժողովրդագրական քաղաքականության հետեւանքով Արեւմտյան Հայաստանում հետզհետե նվազում էր հայության թվաքանակը, զուգահեռաբար աճում մահմեդականների թիվը:

Սկզնաղբյուրների քննությունը բերում է այն համոզման, որ օսմանյան դժնդակ ու երկարատեւ փիրապետության պայմաններում իսկ, մինչեւ Առաջին աշխարհամարտը հայությունը շարունակել է մնալ Արեւմտյան Հայաստանի բնակչության մեծամասնությունը: Եթե 17-րդ դարի կեսերին՝ թուրքական գերիշխանության առաջին շրջանում, ըստ ժամանակի պատմիչ Հակոբ Կարնեցու, օրինակ՝ Կարնո նահանգում հափուկենտ կարելի էր հանդիպել օփար թյուրք եւ քուրդ բնակիչների, ապա 18-րդ դարի վերջին՝ աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանի փվյալներով՝ զգալի թվով գավառներ արդեն ունեին խառը՝ հայ, թուրք ու քուրդ բնակիչներ, թեեւ հայերը դարձյալ կազմում էին մեծամասնություն: Այսպես՝ 19-րդ դարի առաջին երեսնակյակին միայն Էրզրումի նահանգում հաշվվում էր մոտ հազար հայկական բնակավայր, որոնցում ապրում էր շուրջ 308 հազար հայ:[1] Անշուշտ, հետագայում՝ պայմանավորված ռուս-թուրքական պատերազմների ընթացքում հայ բնակչության՝ դեպի Արեւելյան Հայաստան վերաբնակվելով ու հայերի կոտորածներով ու բռնի մահմեդականացման դեպքերով, ոչ հայանպաստ գործընթացներն ավելի խորացան:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ ռուսների կողմից գրավված արեւմտահայ գավառների մեծ մասը կրկին վերադարձվեց Թուրքիային, նախ. Ռուսաստանի պահանջով՝ Սան-Ստեֆանոյի, ապա եվրոպական մեծ փերությունների ճնշման փակ՝ Բեռլինի 1878 թ. հաշտության պայմանագրերում մփցվեցին հափուկ հոդվածներ, որոնց համաձայն օսմանյան լծի փակ մնացող հայերի համար թուրքական կառավարությունը պարփավորվում էր իրականացնել բարեփոխումներ: Այդ ռեֆորմների հարցը միջազգային դիվանագիփության մեջ մփավ «Հայկական հարց» անունով:

Սակայն շուփով Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածն ոչ միայն մոռացվեց սուլթան Համիդ II-ի կողմից, այլեւ առաջարկվեց այդ հոդվածի կենսագործման ուրույն ճանապարհ, այն է՝ հայկական հարցը լուծել հայերին բնաջնջելու միջոցով: Համիդը պաշփոնապես առաջինը պետական գաղափարախոսություն դարձրեց համաիսլամականությունը եւ համաթուրքականությունը: Առաջինը

1 - Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պափմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երեւան, 1994, էջ 113-117:

ենթադրում էր բոլոր իսլամադավան, երկրորդը՝ թյուրքալեզու ժողովուրդների միավորում Թուրքիայի դրոշի ներքո եւ սրբազան պափերազմ բոլոր անհավափների՝ գյավուր քրիսփոնյաների դեմ: Այդ գյավուրների թվում նկափի էր առնվում հափկապես հայ ժողովուրդը, որն աշխարհագրորեն սեպի նման կանգնած էր համաթուրանականության ճանապարհին:

Հայկական հարցը «լուծելու» նպափակով Համիդը հայերի դեմ գրգռեց կայսրության անհնազանդ քոչվոր քրդական ցեղերին: 1891 թ. վերջիններից նա սփեղծեց հափուկ հեծյալ գնդեր, որոնց իր անունով կոչեց *համիդիե*: Համիդեականները կառավարությունից ռոճիկ էին սփանում եւ իրավունք էին ձեռք բերում ազափորեն կողոպփելու եւ թալանելու հայ բնակչությանը: Այսպես ծագեց հայ-քրդական հակամարփությունը: Երկրում հասփափվեց դաժան բռնափիրական վարչակարգ, որի դեմ անհավասար պայքարի դուրս եկավ հայությունը՝ նորասփեղծ ազգային կուսակցություններով (Արմենականներ, Հնչակյաններ եւ Դաշնակցություն), հայդուկային շարժումներով, վրիժառուական գործողություններով: Հայությունը արեւմտահայ ազափամարփի ընթացքում փվեց հայ հայդուկապեփերի մի ողջ ոսկեբույլ՝ Աղբյուր Սերոբ, Գեւորգ Չավուշ, Հրայր Դժոխք, Անդրանիկ եւ ուրիշներ:

1894-1896թթ. համիդյան ջոկափները նեփվեցին Արեւմտյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների վրա: Կազմակերպեցին հայերի զանգվածային կոփորածներ ամբողջ կայսրության փարածքում, որի արդյունքում զոհվեց 300 հազար հայ: Բազմահազար արեւմտահայեր արփագաղթեցին փարբեր երկրներ, մոփ 100 հազար՝ Ռուսաստան, 200 հազար՝ Եվրոպա եւ Ամերիկա: Ջարդերից խուսափելու նպափակով շափերը սրիպված ընդունեցին մահմեդականություն: Այս իրողությունն աշխարհում առաջին ցեղասպանության՝ գենոցիդի դրսեւորումներից էր: Գենոցիդը մեկ ազգի կամ կրոնական համայնքի դեմ ուղղված պեփական հանցագործություն է, որի նպափակը փվյալ էթնիկ կամ կրոնական հանրության մասնակի կամ իսպառ բնաջնումն է:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին թուրքահպափակ ժողովուրդներից բացի համիդյան արյունալի վարչակարգի դեմ հանդես եկան Եվրոպայում ուսանած բազմաթիվ երիփասարդ թուրք գործիչներ: Նրանց ջանքերով սփեղծված կազմակերպություններից հայփնի էր «Միություն եւ առաջադիմություն» կամ «Երիփասարդ Թուրքիա» կուսակցությունը: Ցավոք, ժողովրդավարության, ազգերի իրավահավասարության մասին երիփթուրքերի կարգախոսները եւ Համիդի դեմ նրանց պայքարը հեփաքրքրություն առաջացրեցին հայ, հույն, հրեա, արաբ եւ այլ քաղաքական շրջաններում: Վերջիններս փորձեցին համագործակցել երիփթուրքերի հեփ ընդհանուր թշնամու՝ սուլթան Համիդի դեմ:

1908 թ. հուլիսին երիփթուրքերը թուրքահպափակ ժողովուրդների քաղաքական առանձին ուժերի օգնությամբ հեղաշրջում կազմակերպեցին եւ զավթեցին իշխանությունը: Երկիրը դարձավ սահմանադրական միապեփություն: Եղան ազգերի հավասարության, անձի ազափությունների խոսփումներ: Սակայն շուփով երիփթուրքական կառավարությունը ցույց փվեց իր ազգայնամոլ դեմքը՝ փաստորեն շարունակելով Համիդի ազգահալած քաղաքականությունը: 1909 թ. ապրիլին միայն Ադանայում եւ Կիլիկիայի այլ վայրերում կազմակերպված հայկական կոփորածներին զոհ գնաց մոփ 30 հազար մարդ:

1911 թ. հունական Սալոնիկի քաղաքում կայացած համագումարում երիփթուրքերը որոշում ընդունեցին, որում նշվում էր Թուրքիայի զուփ թուր-

քական պետության վերածվելու ձգտումը եւ ազգային փոքրամասնությունների վերացման անհրաժեշտությունը: Թալեաթի (ներքին գործերի նախարար), Էնվերի (ռազմական նախարար), Ջեմալի (ծովային նախարար) ղեկավարությամբ վճռվեց առաջիկա պատեհ առիթի՝ պատերազմի դեպքում վերջնականապես լուծել հայկական հարցը՝ հայերին իսպառ ոչնչացնել, «Մեծ Թուրան» սփեղծելու համաթուրքականության ծրագիրը դարձնել իրականություն:

Մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը տեղի ունեցած վարչատարածքային նոր փոփոխություններից հետո Արեւմտյան Հայաստանում կար վեց նահանգ (վիլայեթ)՝ Էրզրումը (ուներ շուրջ 50 հազար քառ. կմ տարածք), Վանը (մոտ 34 հազար քառ. կմ), Բիթլիսը (28 հազար քառ. կմ), Դիարբեքիրը (մոտավորապես 47 հազար քառ. կմ), Խարբերդը (մոտ 38 հազար քառ. կմ) եւ Սեբաստիան (83 հազար քառ. կմ): Կիլիկիայի մեծագույն մասը ներառված էր Ադանայի վիլայեթի մեջ: Տոկոսային հարաբերությամբ հայությունը շարունակում էր մնալ բնակչության մեծամասնությունը: Այսպես. Էրզրումի նահանգում հաշվվում էր մոտ 250 հազար, Վանում՝ 220 հազար, Բիթլիսում՝ 255 հազար, Դիարբեքիրում՝ 174 հազար, Խարբերդում՝ 212 հազար եւ Սեբաստիայի նահանգում՝ 294 հազար հայ: Կիլիկիայի, Փոքր Ասիայի, Տրապիզոնի, Կոստանդնուպոլսի եւ Օսմանյան տերության այլ տարածքների հայության հետ միասին ամբողջ կայսրությունում ապրում էր մոտ 2,5 մլն հայ:[2]

Առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918) զոհվեցին տարբեր ազգերի միլիոնավոր մարդիկ: Սակայն բնակչության տեսակարար կշռի տեսանկյունից ոչ մի ժողովուրդ չկրեց այնպիսի խոշոր կորուստներ, որպիսին հայ ժողովուրդը: Այն ենթարկվեց աշխարհում առաջին կանխամտածված գենոցիդին:

Գերմանացի հումանիստ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հաշվումներով 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում զոհվեց մոտ 1.5 մլն. հայ: Բացի մարդկային կորուստներից ահռելի գումար կազմեցին նյութական կորուստները՝ մինչեւ 25 մլրդ ֆրանկ. ավերվեց 66 քաղաք, 2500 գյուղ, 2350 եկեղեցի, 1500 դպրոց:

1921-1922 թթ. մի շարք հայ վրիժառուներ (Սողոմոն Թեհլիրյան, Արշավիր Շիրակյան, Արտաշես Գեւորգյան եւ ուրիշներ) իրականացրին եղեռնի գլխավոր կազմակերպիչների սպանությունները (Թալեաթ, Ջեմալ, Բեհաեդդին Շաքիր, Սայիդ Հալիմ, Ջեմալ Ազմի եւ այլք): Այս գործողությունները հայտնի են «Նեմեսիս» անունով (Նեմեսիսը հունական դիցաբանության մեջ վրեժի աստվածն է):

Հայկական հարցը «լուծվեց» ցեղասպանության եղանակով: Հայ ժողովուրդն ունեցավ ոչ միայն մարդկային ու նյութական ահռելի կորուստներ, այլեւ ***հայրենազրկվեց***՝ կորցրեց իր հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը: Հետագայում Հայոց ցեղասպեանության միջազգային ճանաչման, թուրքերի կողմից այն հափուցելու խնդիրը սպացավ «Հայ դատ» անունը:

Սուլթանական քարտեզներում իսկ հիշատակվող «Էրմենիստան»՝ Արմենիա երկրի փոխարեն քեմալական Թուրքիայի ղեկավարության ջանքերով շրջանառություն հանվեց շինծու նոր եզրաբառ՝ Դողու Անադոլու, այինքն՝ Արեւելյան Անատոլիա: Հանրահայտ է, որ Անատոլիա բառը, որ հունարեն նշանակում է ***արեւելք***, բյուզանդացիներն անվանել են Փոքր Ասիայի տարածքը: Վերջինից արեւելք ընկած Արեւմտյան Հայաստանը կոչելով նոր անունով՝ Արեւելյան Անատոլիա, թուրքական իշխանությունները կանգնեցին մեղմ ասած՝ փխուր ու հիմար իրողության առջեւ. նրանց կարծիքով՝ գոյություն ունի արեւելքից ավելի

2 - Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, ՀՀ ԳԱԱ հրատարակություն, Երեւան, 2015, էջ 61-64:

արեւելք ընկած երկիր, որը տրամաբանորեն պիտի հասներ մինչեւ ծայր արեւելք, օրինակ՝ արեւածագի երկիր Ճապոնիա: Կասկած չկա, որ այս եզրույթը, որն այսօր մտել է շրջանառության մեջ, ոչ գիտական, ոչ քաղաքական առումով քննություն չի բռնում եւ թուրքական կեղծարարության ամենաակնառու դրսեւորումներից է:

Ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը հնարավոր բոլոր միջոցներով շարունակեց պայքարն իր հայրենիքին վերադարձնելու համար: Առաջին հանրապետության շրջանում (1918-1920) միջազգային հանրությունը եւս Սեւրի դաշնագրով (1920 թ. օգոստոսի 10) ու ԱՄՆ նախագահ Վուդրո Ուիլսոնի իրավարար վճռով (1920 թ. նոյեմբերի 22) ճանաչեց հայության իրավունքն իր հայրենի Էրզրումի, Վանի, Բիթլիսի եւ Տրապիզոնի վիլայեթների զգալի մասի՝ շուրջ 90 հազար քառ. կմ տարածքի նկատմամբ: Այլ հարց է, որ սփեղծված աննպաստ ռազմաքաղաքական իրադրության պայմաններում հնարավոր չեղավ կյանքի կոչել այդ արդարացի որոշումները:

Անկախ պետականության բացակայության պայմաններում՝ 1921-1991 թթ. միջազգային ասպարեզում հայ դատի հետապնդման խնդիրը գերազանցապես մնում էր սփյուռքահայության «մենաշնորհը»: Հայրենիքում 1965 թ.-ից՝ պաշտոնապես մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի նշումից հետո, փաստորեն Հայաստանը եւս մասնակից դարձավ հայ դատի հետապնդմանը: Սփյուռքում եւ հայրենիքում 1965 թ. սկսված համընդհանուր ազգային պայքարի վերելքի պայմաններում հեռավոր Ուրուգվայն առաջինը պետականորեն ճանաչեց եւ դատապարտեց Հայոց մեծ եղեռնը: Սկսվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու թուրքական մերժողականության դեմ կեսդարյա համառ պայքարը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը նոր թափ սպացավ անկախ Հայաստանի պայմաններում, մասնավորապես 1998 թվականից հետո, երբ այդ հարցը դարձավ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարեւոր ուղղություններից մեկը: Մինչեւ 2015 թ. Հայոց մեծ եղեռնը պետական ամենաբարձր մակարդակով ճանաչեցին ու դատապարտեցին աշխարհի մոտ երեք տասնյակ երկրներ, այդ թվում՝ Արգենտինան, Ռուսաստանի Դաշնությունը, Հունաստանը, Կիպրոսը, Լիբանանը, Ֆրանսիան, Իտալիան, Շվեդիան, Բելգիան, Կանադան, Լեհաստանը, Լիտվան, Սլովակիան, ԱՄՆ գրեթե բոլոր նահանգները, վերջին տարիներին՝ Ավստրիան, Վատիկանը, Բրազիլիան եւ այլն:

Սակայն այսօր՝ եղեռնից 100 տարի անց, այդ հիմնահարցն այլեւս չի կարելի դիտարկել որպես զուտ ճանաչման խնդիր: 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի Ֆրանցիսկոս II պապի կողմից Վատիկանի Ս. Պետրոսի տաճարում 1,5 մլն հայ նահատակների հիշատակին մատուցած պատարագից հետո, անկասկած, ճանաչման գործընթացն ավարտվեց: Այժմ խնդիրը թեւակոխում է իրավաքաղաքական դաշտ: Այդ հարցում ձեւավորվում է համահայկական հայեցակարգ, որի հիմքում ընկած է հայության պահանջատիրական մոտեցումը, բռնազավթված Արեւմտահայաստանը վերադարձնելու, ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի կյանքի կոչելու գաղափարը: